



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 870-Ա

**«Ա/Ձ ԱԶՆԻՎ ՍԱՀԱԿՅԱՆ ՌԱԶՄԻԿԻ»-Ի ՀԵՏ «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/105-3»
ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/105» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025թ. օգոստոսի 26-28-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «Ա/Ձ Ազնիվ Սահակյան Ռազմիկի»-ն սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները՝ տուժանքի մասին համաձայնագրերի ձևով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Ա/Ձ Ազնիվ Սահակյան Ռազմիկի»-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակարարման «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/105-3» ծածկագրով գնման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**



Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 22
ք.Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 871-Ա

ՔԻՇՄԻՇ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ, ԳԱՐԻԿ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ, ԱԼԻՆԱ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ԱՎՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քիշմիշ Ավդալյանը, Գարիկ Ավդալյանը, Ալինա Ավդալյանը և Լուսինե Ավդալյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2025 թվականի սեպտեմբերի 05-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 1.874 հա ընդհանուր մակերեսով, 06-100-0141-0013, 06-100-0055-0008, 06-100-0134-0003, 06-100-0141-0072, 06-100-0141-0013, 06-100-0117-0023 և 06-100-0119-0129 ծածկագրերով հողամասերը հանդիսանում են Քիշմիշ Ավդալյանի, Գարիկ Ավդալյանի, Ալինա Ավդալյանի և Լուսինե Ավդալյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում են հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 142.349 (հարյուր քառասուններկու հազար երեք հարյուր քառասունինը) ՀՀ

դրամ,որից 94.917 (իննսունչորս հազար ինը հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 47.432 (քառասունյոթ հազար չորս հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2024 թվականների համար կազմում է 50.994 (հիսուն հազար ինը հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ: 2025 թվականի սեպտեմբերի 05-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերի 23-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել Քիշմիշ Ավդալյանը,Գարիկ Ավդալյանը,Ալինա Ավդալյանը և Լուսինե Ավդալյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 17.09.2025) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Քիշմիշ Ավդալյանի, Գարիկ Ավդալյանի,Ալինա Ավդալյանի և Լուսինե Ավդալյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1.Քիշմիշ Ավդալյանից, Գարիկ Ավդալյանից, Ալինա Ավդալյանից և Լուսինե Ավդալյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 193.343 (հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի

հարկի պարտքի գումար. 142.349 (հարյուր քառասուններկու հազար երեք հարյուր քառասունինը) ՀՀ դրամ՝ որպես 1.874 հա ընդհանուր մակերեսով, 06-100-0141-0013, 06-100-0055-0008, 06-100-0134-0003, 06-100-0141-0072, 06-100-0141-0013, 06-100-0117-0023 և 06-100-0119-0129 ծածկագրով հողամասերի հողի հարկ, որից 94.917 (իննսունչորս հազար ինը հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 47.432 (քառասունյոթ հազար չորս հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ՝ որպես տույժ , 50.994 (հիսուն հազար ինը հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ: Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 9002751084037 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002021 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝



Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 23
ք.Տաշիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 872-Ա

ԳԵՂԵՑԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԵՏԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՎՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Տաշիր համայնքի Ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Գեղեցիկ Կարապետյանը և Անետա Կարապետյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2025 թվականի սեպտեմբերի 05-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 0,958 հա ընդհանուր մակերեսով, 06-100-0125-0357, 06-100-0116-0026 և 06-100-0101-0030 ծածկագրերով հողամասերը հանդիսանում են Գեղեցիկ Կարապետյանի և Անետա Կարապետյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում են հարկվող օբյեկտ : Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 76.850 (յոթանասունվեց հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որից 51.338 (հիսունմեկ հազար երեք հարյուր երեք հարյուր երեսունույթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 25.512 (քսանհինգ հազար հինգ հարյուր տասներկու) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2024 թվականների համար կազմում է 14.565 (տասնչորս հազար հինգ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ:

2025 թվականի սեպտեմբերի 05-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերի 23-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել Գեղեցիկ Կարապետյանը և Անետա Կարապետյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 17.09.2025): (Վարչական վարույթի լուսմներն իրականացվել են պատշաճ ծանուցված Գեղեցիկ Կարապետյանի և Անետա Կարապետյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Գեղեցիկ Կարապետյանից և Անետա Կարապետյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 91.415 (իննսունմեկ հազար չորս հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի հարկի պարտքի գումար. 76.850 (յոթանասունվեց հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որպես 0,958 հա ընդհանուր մակերեսով, 06-100-0125-0357, 06-100-0116-0026 և 06-100-0101-0030 ծածկագրով հողամասերի հողի հարկ, որից 51.338 (հիսունմեկ հազար երեք հարյուր երեք հարյուր երեսունուրթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 25.512 (քսանհինգ հազար հինգ հարյուր տասներկու) ՀՀ դրամ՝ որպես տույժ, 14.565 (տասնչորս հազար հինգ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես

անշարժ գույքի հարկ: Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 9002751084037 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002021 հաշվեհամարին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**



Ն. ԲԱՂԴԱՍՏԱՐՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 23
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2025 թվականի N 873-Ա

**ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշումով և հիմք ընդունելով Ռազմիկ Հովհաննեսի Պետրոսյանի դիմումը (մուտք՝ 24.09.2025-ի 2025-ի ՔԴ 863- 25)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ռազմիկ Հովհաննեսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված Toyota Camry 2,5 մակնիշի, 37TX817 պետհամարանիշի օտարված ավտոմեքենայի գույքահարկի 19932 (տասնինը հազար ինը հարյուր երեսուներկու) դրամ գերավճարը հաշվանցել և մարել Ռազմիկ Հովհաննեսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված Toyota Camry 2,5 մակնիշի, 01QW010 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի առկա հարկային պարտավորությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝**



Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 25
ք.Տաշիր